

## Քննարկում՝ նվիրված Նորավանք և Արենի գբոսաշրջային հատվածի գարգացման հարցերին

09.09.2014



2014 թվականի սեպտեմբերի 6-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն, որի ընթացքում առաջին անգամ ներկայացվեց Նորավանք և Արենի գբոսաշրջային հատվածի գարգացման նախագիծը: Այն մշակվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի նախաձեռնությամբ՝ ԱՄՆ Միջազգային գարգացման գործակալության (USAID) կողմից ֆինանսավորվող Ձեռնարկությունների գարգացման և շուկայի մրցունակության (EDMC) ծրագրի փորձագետ Ջեյմս Ջեսամինի կողմից: Նախագիծով ուրվագծվում է Արենի համայնքի և դրա վարչական տարածքում գտնվող Նորավանքի վանական համալիրի շրջակայքի գարգացման հեռանկարային ուղղությունները: Նախագծի բազմակողմանի քննարկման և բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցության ապահովման նպատակով քննարկմանը հրավիրվել էին ներկայացուցիչներ ՀՀ ՎՁՄ-ից, ՀՀ մշակույթի նախարարությունից, տարբեր գերատեսչություններից, Արենի համայնքից, շրջակա համայնքներից, գբոսաշրջային ոլորտի կազմակերպություններից, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Վայոց ձորի թեմից, մասնավոր հատվածի և հասարակական կազմակերպություններից և այլն: Քննարկման ընթացքում նախագծի հեղինակի կողմից ներկայացվեց կատարված աշխատանքն ու հիմնական գաղափարները, որին վերաբերյալ եղան տարբեր առաջարկություններ, ծավալվեց մտքերի փոխանակում: Ամփոփելով քննարկումը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը շնորհակալություն հայտնեց Ձեռնարկությունների գարգացման և շուկայի մրցունակության (EDMC) ծրագրի գործընկերներին և փորձագետին կարճ ժամանակահատվածում որակյալ աշխատանք ներկայացնելու և քննարկման մասնակիցներին շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համար: Է.Ղազարյանը խնդրեց հաշվի առնել քննարկման ընթացքում հնչած ուշագրավ առաջարկությունները, որից հետո նախագծի հայերեն տարբերակը տրամադրել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին՝ դրա հետագա քննարկումներն ու լրամշակումը կատարելու նպատակով: